Դարպաս	17-19-րդ դարեր
Մատուռ Անանիա Առաքյալի (զանգակատուն)	1889 թվական
Եկեղեցի Սբ. Աստվածածին (Կաթողիկե)	13-րդ դար
Խաչքար	15-րդ դար
Խաչքար Գրիգորի Անանի	17-րդ դար
Խաչքար Մելիք Աղամալի	1693 թվական
Խաչքար Նիկողոսի	1694 թվական
Որմնանկար «Աստվածամայրը մանկան հետ»	18-19-րդ դարեր
Որմնանկար «Ավետում»	18-19-րդ դարեր
Եկեղեցի Կոնդի Սբ. Հովհաննես Մկրտիչ	1706-1710 թվականներ
Խաչքար	18-րդ դար
Խաչքար	18-րդ դար
Խաչքար	18 դար
Խաչքար	18 դար
Խաչքար	18 դար
Խաչքար	18 դար
Խաչքար	18 դար
Խաչքար	18 դար
Խաչքար	18 դար
Խաչքար	18 դար
Խաչքար	18 դար
Խաչքար	18 դար
Խաչքար Աղավելի	18 դար

հուշարձան	կառուցված
Խաչքար Աղեքսանդրի	18 դար
Խաչքար Անդրեասի, Արիստակեսի և Փարու	18 դար
Խաչքար Գիրխասի	1710 թվական
Խաչքար Գրիգորի, Մկրտումի, Մալխասի	18 դար
Խաչքար Խանումի	18 դար
Խաչքար Մարգարի և այլոց	18 դար
Խաչքար Մարկոսի	18 դար
Խաչքար Մելիք Նազի և ծնողների	18 դար
Խաչքար Նիկողոսի, Լելու	18 դար
Խաչքար Սատաթի, Խանբեկու	18 դար
Խաչքար Սպահանցի Խաչատուրի	18 դար
Խաչքար Սպահանցի Խաչատուրի և ծնողների՝ Ղազարի, Տիխանի	18 դար
Դարպաս	1863 թվական
Եկեղեցի Սբ. Սարգիս	1842 թվական,
Զանգակատուն	1998 թվական
Խաչքար	1511 թվական
Խաչքար	16 դար
Խաչքար	16 դար
Խաչքար	16 դար
Տապանաքար	16 դար
Տապանաքար	16 դար
Տապանաքար Պարոն Մարգարի	1583 թվական
Տապանաքար Ջուղայեցի Տիրացու Պետրոսի	1624 թվական

հուշարձան	կառուցված
Զորանոցային համալիր Երևանի բերդի	1582 թվական– 20 դար սկզբ
Պարիսպ	16-17 դարեր
Թանգարան. Ժողովրդական ստեղծագործության պետական թանգարանը (Ժողովրդական ստեղծագործության տուն)	1941 թվական
Թատրոնի շենք. Գաբրիել Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը	1966 թվական
Բարձրաքանդակներ	1966 թվական
Բարձրաքանդակ «Հուշկապարիկ»	1976 թվական
Հուշարձան Գաբրիել Սունդուկյանի	1972 թվական
Պաննո «Հայաստան»	1965 թվական
Ինստիտուտի շենք. Անասնաբուծական - անասնաբուժական ինստիտուտը	1928 թվական
Ինստիտուտի շենք. Մարքսիզմ - լենինիզմի հայկական ինստիտուտը	1949 թվական
Ինստիտուտի շենք. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը (մատենադարան)	1957 թվական
Խճանկար «Ավարայրի ճակատամարտ» («Վարդանանք»)	1960 թվական
Որմնանկարներ «Հայ մշակույթի պատմություն»	1959 թվական
Հուշարձան Անանիա Շիրակացու	1963 թվական
Հուշարձան Գրիգոր Տաթևացու	1967 թվական
Հուշարձան Թորոս Ռոսլինի	1967 թվական
Հուշարձան Մեսրոպ Մաշտոցի	1962 թվական
Հուշարձան Մխիթար Գոշի	1967 թվական
Հուշարձան Մովսես Խորենացու	1964 թվական
Հուշարձան Ֆրիկի	1967 թվական

հուշարձան	կառուցված
Բացօթյա ցուցադրություն	մ.թ.ա. 2-1 հզ, 14-17 դարեր
Կոթող «Դուռ»	մ.թ.ա. 7 դար
Խաչքար	1294 թվական
Խաչքար Խաչատուրի	1545 թվական
Խաչքար Հախնազար Աղայի	1596 թվական
Խաչքար Մարիանի	1604 թվական
Տապանաքար	17 դար
Վիշապաքար	մ.թ.ա. 2-1 հզ
[[Մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտ|Ծննդատան շենք. Պարթև Մարգարյանի անվան Մոր և մանկան առողջության պահպանման հայկական գիտահետազոտական կենտրոնը]]	1931 թվական. 1936-1939 թվականներ
Կամուրջ «Երևան-Սևան» երկաթուղու	1935 թվական
Կամուրջ «Կարմիր» (Հրազդանի հին կամուրջ), (Խոջա Փլավի)	1679 թվական
Կամուրջ «Հաղթանակի»	1939-1961 թվականներ
Կամուրջ Նորքի (Գետառի)	1664 թվական
Կայան Տրանսֆորմատորային	1930 թվական
Համալսարանի համակառույց. Երևանի ճարտարագիտական և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանները	1932-1964 թվականներ
Մասնաշենք՝ առաջին	1932 թվական, 1935 թվական
Մասնաշենք՝ երկրորդ	1935 թվական
Մասնաշենք՝ երրորդ (գլխավոր)	1955 թվական, 1959 թ, . 1964 թվական
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհված պոլիտեխնիկականներին	1981 թվական

հուշարձան	կառուցված
Համալսարանի համակառույց, Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանը	1927-1955 թվականներ
Անատոմիկումի շենք	1927 թվական
Մասնաշենք գլխավոր	1938 թվական, 1950-ական թվականներ
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհված բժշկական ինստիտուտցիներին	1972 թվական
Համալսարանի շենք. Երևանի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքը	1965 թվական
Ժայռապատկերներ	մ.թ.ա. 5-3 հզ
Խաչքար՝ Արցախում զոհված մտավորականներին և ԵՊՀ ուսանող-ազատամարտիկներին	1996 թվական
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհված համալսարանականներին	1979 թվական
Հուշարձան՝ Մովսես Խորենացու	1996 թվական
Հանդիսատեսային շենք. Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը	1977 թվական
Բարձրաքանդակներ	1977 թվական
Հանրակացարանի շենք Անասնաբուժական - անասնաբուծական ինստիտուտի հանրակացարանը	1930 թվական
Հիդրոէլեկտրակայանի շենք. Երևանի առաջին ՀԷԿ-ը	1926 թվական
Հիվանդանոցային շենքերի համակառույց	1917-1960 թվականներ
Ինստիտուտի շենք. Ֆիզիոթերապիայի ինստիտուտը	1930 թվական, 1932 թվական, 1939 թվական
Հիվանդանոցի շենք. մանկաբարձության և գինեկոլոգիայի հիվանդանոցը	1929 թվական
Ակնաբուժարանի շենք	1929 թվական
Հիվանդանոցի շենք. Քաղաքային հիվանդանոցը	1917-1922 թվականներ

հուշարձան	կառուցված
Հիվանդանոցի շենք. Մանկական հիվանդանոցը	1939 թվական, 1975 թվական
Հրապարակի համալիր. Ազատության հրապարակը	1924-1939 թվականներ
Գերեզման Ալեքսանդր Սպենդիարյանի	1928 թվական, 1966 թվական
Հուշարձան «Մուսա»	1963 թվական
Հանդիսատեսային շենք. Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնը և «Արամ Խաչատրյան» մեծ համերգասրահը	1940 թվական, 1953 թվական
Հուշարձան Հովհաննես Թումանյանի	1957 թվական
Հուշարձան՝ Արամ Խաչատրյանի	1999 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Սպենդիարյանի	1957 թվական
Հրապարակի համալիր. Հանրապետության Հրապարակը	1926-1977 թվականներ
Հյուրանոց «Արմենիա»	1958 թվական
Մշակույթի տուն. Արական գիմնազիայի (Հայիամերգի փոքր դահլիճ) և թանգարանների շենքը	1916 թվական
Վիտրաժ «Հայաստան»	1965 թվական
Վարչական շենք. Արհմիությունների տունը և Կապի նախարարությունը	1956 թվական
Վարչական շենք. Կառավարական տունը (ՀՀ Նախարարների խորհրդի շենք)	1929 թվական 1941 թվական 1952 թվական
Վարչական շենք. Կառավարական երկրորդ տունը	1955 թվական
Բանկի շենք. Գյուղատնտեսական բանկը և Գյուղբանկի աշխատողների բնակելի տունը	1927-1930 թվականներ
Բանկի շենք. Թիֆլիսի առևտրական բանկը	1910 թվական
Բնակելի տուն Ստեփան Տիգրանյանի	1910-ական թվականներ
Դատարանի շենք. Գերագույն դատարանը	1936 թվական

հուշարձան	կառուցված
Հուշարձան Ստեփան Շահումյանի	1931 թվական
Հրապարակ՝ Անդրեյ Սախարովի անվան	1850– 1860 թվականներ, 1924 թվական, 1960-ական թվականներ
Բնակելի տուն	1930 թվական
Հրշեջ կայան. Կամավոր հրշեջ ընկերության շենքը (Հրշեջ դեպո)	1930 թվական
Հուշարձան՝ Անդրեյ Սախարովի	2000 թվական
Վարչական շենք. Արքունական պալատը և Նահանգական գանձատունը	1901 թվական
Վարչական շենք. Երկրաբանական վարչության նախկին շենքը	1930-1933 թվականներ
Հուշակոթող՝ Վախթանգ Անանյանի	1982 թվական
Հուշակոթող՝ Հրաչյա Աճառյանի	1982 թվական
Հուշակոթող՝ Թորոս Թորամանյանի	1985 թվական
Հուշահամալիր՝ Մեծ եղեռնի զոհերին	1967 թվական
Գերեզման՝ Մովսես Գորգիսյանի	1990 թվական
Գերեզման՝ Սամվել Գևորգյանի	1992 թվական
Գերեզման՝ Էդիկ Մարկոսյանի	1990 թվական
Գերեզման՝ Մուշեղ Մխցյանի (Վոժդ)	1991 թվական
Գերեզման՝ Երվանդ Սաղումյանի (Երո)	1990 թվական
Խաչքար՝ Բաքվի 1990 թվական զոհերի հիշատակին	1990 թվական
Խաչքար Գանձակի 1988 թվական նահատակներին	1988 թվական
Խաչքար Սումգայիթի 1988 թվական զոհերի Հիշատակին	1988 թվական
Հուշակոթող	1965 թվական
Հուշարձան Մեծ եղեռնի զոհերին	1967 թվական
Թանգարան Հայոց ցեղասպանության	1995 թվական

հուշարձան	կառուցված
Հուշաղբյուր՝ Երևան և Կարրարա քաղաքների բարեկամության	1964 թվական
Հուշաղբյուր Մեծ եղեռնի և Սպիտակի 1988 թվական դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերին	1990 թվական
Հուշաղբյուրներ՝ Խորհրդային Միության երիտասարդ հերոսներին	1949 թվական
Հուշաղբյուր Սայաթ-Նովային	1963 թվական
Հուշասալ Երկրորդ աշխարհամարտում զոհված պիոներներին	1985 թվական
Հուշարձան՝ Խաչատուր Աբովյանի	1950 թվական
Հուշարձան՝ Խաչատուր Աբովյանի	1955 թվական
Հուշարձան՝ «Բարեկամության ձեռքեր»	1965 թվական
Հուշարձան Վալերի Բրյուսովի	1966 թվական
Մաքսիմ Գորկու դիմաքանդակ	1967 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Գրիբոյեդովի	1973 թվական
Հուշարձան՝ Լեոնիդ Ենգիբարյանի	1995 թվական
Հուշարձան՝ «Էրեբունի-Երևան» («Կենաց Ծառ»)	1970 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Թամանյանի	1974 թվական
Հուշարձան՝ Ավետիք Իսահակյանի	1965 թվական
Հուշարձան՝ Ստեփան Լիսիցյանի	1982 թվական
Հուշարձան՝ Աղասի Խանջյանի	1987 թվական
Հուշարձան Կոմիտասի	1988 թվական
Հուշարձան՝ Կարո Հալաբյանի	1997 թվական
Հուշարձան՝ Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման 20-ամյակին (Կարմիր բանակի մարտիկներին)	1940 թվական
Հուշարձան՝ Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման 30-ամյակին	1950 թվական

հուշարձան	կառուցված
Հուշարձան՝ «Հավերժական կրակ» (Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման համար զոհված մարտիկների հուշարձան)	1960 թվական
Հուշարձան՝ Վարդան Մամիկոնյանի	1975 թվական
Հուշարձան՝ Վլադիմիր Մայակովսկու	1974 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Մյասնիկյանի	1980 թվական
Հուշարձան՝ Ասքանազ Մռավյանի	1956 թվական
Հուշարձան՝ Միքայել Նալբանդյանի	1965 թվական
Հուշարձան՝ Միքայել Նալբանդյանի	1985 թվական
Հուշարձան՝ Նար Դոսի	1956 թվական
Հուշարձան՝ Արշավիր Շավարշյանի	1965 թվական
Հուշարձան՝ Եղիշե Չարենցի	1985 թվական
Հուշարձան՝ Անտոն Չեխովի	
Հուշարձան՝ «Պեպո»	1976 թվական
Հուշարձան՝ Ալեքսանդր Պուշկինի	1949 թվական
Հուշարձան՝ Մարտիրոս Սարյանի	1986 թվական
Հուշարձան՝ Նելսոն Ստեփանյանի	1950 թվական
Հուշարձան՝ Վաղարշ Վաղարշյանի	1983 թվական
Հուշարձան՝ Վահան Տերյանի	1999 թվական
Հուշարձան՝ Արմեն Տիգրանյանի	1987 թվական
Մանկապարտեզի շենք. Երևանի կայազորի մանկապարտեզը	1951 թվական
Մարզադաշտ. Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտը	1953 թվական. 1963 թվական
Մարզահամերգային համալիր. «Կարեն Դեմիրճյան» մշակույթի կենտրոնը	1984 թվական
Բարձրաբանդակներ	1984 թվական

հուշարձան	կառուցված
Մզկիթ Աբաս Միրզայի (Սարդարի)	19 դար սկզբ
Մզկիթ «Կապույտ» (Գյոյ մզկիթ)	1766 թվական
Մշակույթի տուն. Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տունը	1970 թվական
Հուշարձան Տիգրան Պետրոսյանի	1989 թվական
Շուկայի շենք. Կենտրոնական ծածկած շուկան	1952 թվական
Որմնանկար «Հայաստան»	1982 թվական
Պալատ պիոներների և դպրոցականների (քաղաքային Պիոներ - պալատ)	1938 թվական
Պոլիկլինիկայի շենք	1954-1955 թվականներ
Ջրանցույց	1950 թվական
Ջրանցք՝ Մամռիի	մ.թ.ա. 7 դար, 1031 թվական
Սառցակոմբինատ	1950 թվական
Ստեղծագործական միության շենք. Հայաստանի գրողների միությունը (գրողների տունը)	1954 թվական
Ստեղծագործական միության շենք. Հայաստանի կոմպոզիտորների միությունը (կոմպոզիտորների տունը)	1955 թվական
Ստեղծագործական Միության շենք. Հայաստանի ճարտարապետների միությունը (Ալ. Թամանյանի անվան Հայաստանի ճարտարապետի տունը)	1958 թվական
ՀՀ Նախագահի նստավայր	1958 թվական
Վարչական շենք Դեղատների գլխավոր վարչության	
ՀՀ Ազգային ժողովի շենք	1949-1950 թվականներ
Վարչական շենք ՀՀ Ազգային անվտանգության նախարարության	1936 թվական
Վարչական շենք «Հայէներգո»-ի գլխավոր վարչության	1940 թվական
Վարչական շենք. Փոխադարձ վարկի ընկերությունը	1912 թվական

հուշարձան	կառուցված
Վարչական շենք. Քաղաքային ոստիկանության վարչությունը	1908 թվական
Վիշապաքար	մ.թ.ա. 3-2 հզ
Տուն-թանգարանի շենք. Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանը	1949-1953 թվականներ
Բարձրաքանդակ՝ Հովհաննես Թումանյանի	1971 թվական
Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան	1946 թվական, 1963 թվական
Արամ Խաչատրյանի տուն-թանգարան	1980 թվական
Հակոբ Կոջոյանի և Արա Սարգսյանի տուն-թանգարան	1936 թվական, 1973 թվական, 1981 թվական
Խաչքար՝ Ասլիզատի	1601 թվական
Հուշակոթող՝ Հակոբ Կոջոյանին և Արա Սարգսյանին	1981 թվական
Եղիշե Չարենցի տուն-թանգարան	1935 թվական, 1975 թվական
Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան	1935 թվական, 1967 թվական
Սերգեյ Փարաջանովի թանգարան	1991 թվական
Ուսումնական հաստատության շենք. Երևանի ուսուցչական սեմինարիան	1905 թվական
Գերեզման Հակոբ Մանանդյանի	1952 թվական, 1971 թվական
Փողոցի կառուցապատման հատվածներ. Աբովյան փողոցը 1	1860–ական թվականներ - 20-րդ դար
Ակումբ Կառուցողների	1932 թվական
Թատրոնի շենք. Կոնստանտին Ստանիսլավսկու անվան Ռուսական դրամատիկական թատրոնը	1932 թվական
Վարչական շենք. Սպորտկոմիտեն և ֆիզկուլտուրայի կենտրոնական տունը	1932 թվական
Հանրախանութ «Մանկական աշխարհ»	1936 թվական

հուշարձան	կառուցված
Շ. Ազնավուրի անվան հրապարակ	
Կինոթատրոն «Մոսկվա»	1936 թվական
Բարձրաքանդակներ «Չապաև», «Պեպո», «Դավիթ Բեկ», «Պար», «Սայաթ-նովա», «Բեմ»	1936 թվական, 1986 թվական
Հյուրանոց «Երևան»	1927 թվական
Ստեղծագործական միության շենք. Հայաստանի նկարիչների միությունը («Նկարչի տուն»)	1958 թվական
Փողոցի կառուցապատման հատվածներ. Աստաֆյան փողոցը	1860-ական թվականներ-20 դար սկզբ
Բնակելի տուն և բուժարան Տեր-Ավետիքյանի	19 դար վրջ
Խանութ Մելիք-Օհանջանյանի	19 դար վրջ
Բնակելի տուն և բուժարան Հովհաննես Հովհաննիսյանի, կոչվում է նաև 1944-ից այստեղ գտնվող «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության» անունով («ԱՕԿՍ-ի շենք»)	1914-1917 թվականներ
Բնակելի տուն Եգոր Խանզադյանի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Բարսեղ Եղիազարյանի	1884 թվական
Բնակելի տուն Գրիգոր Եղիազարյանի	1884 թվական
Բնակելի տուն Գրիգոր Ամիրյանի	19-րդ դար
Բնակելի տուն Գրիգոր Ամիրյանի	19-20 դարեր
Բնակելի տուն Հովհաննես Գրիգորյանի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Մկրտիչ Ենգիբարյանի	1898 թվական
Բնակելի տուն Ստեփան Սողոմոնյանի	1890-ական թվականներ
Բնակելի տուն Հովհաննես Տեր-Մկրտչյանի	19-րդ դարի վերջ- 20 դարի սկիզբ
Բնակելի տուն Գևորգ Անտոնյանցի	1890-ական թվականներ
Բնակելի տուն Գաբրիել Աբրահամյանի	19-րդ դարի վերջ

հուշարձան	կառուցված
Բնակելի տուն Վաղարշակ և Հակոբ Բաբախանյանների	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Երեմ Սանահյանի	1894 թվական
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Կարապետ Աբրահամյանի	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Գործարանի շենք՝ Համբարձում Սողոմոնյանի կոնյակի գործարանը	1890-ական թվականներ-1910 թվական
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Արմենակ Մելիքյանցի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Աղաջան Աֆրիկյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն՝ Լավրենտի Ֆոտինովի	19-20 դարեր
Բնակելի տուն՝ Առաքել Աֆրիկյանի	20-րդ դարի սկիզբ
Որմնանկար	
Բնակելի տուն՝ Գեղամ Մնացականյանի	1898 թվական
Բնակելի տուն՝ Էմին Տեր-Գրիգորյանի	1890-ական թվականներ
Բնակելի տուն՝ Հակոբ Բոշնաղյանցի	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Հովհաննես Օհանյանի	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Փողոցի կառուցապատման հատվածներ. Հին Կազարմայի փողոցը	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ

հուշարձան	կառուցված
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Գործարանի համալիր. Դավիթ Սարաջյանի Գինու-կոնյակի գործարանը	1896-1906 թվականներ
Բնակելի տուն	1896-1906 թվականներ
Գործարան Սպիրտի թորման	1896 թվական
Պահեստի շենք	1896-1906 թվականներ
Ուսումնական հաստատության համակառույց. Արական գիմնազիան	1896 թվական
Մասնաշենք	1896 թվական
Ուսումնական հաստատության շենք. Հռիփսիմյան իգական գիմնազիան	1898 թվական, 1905 թվական
Փողոցի կառուցապատման հատվածներ. Նահանգական փողոցը	1889 թվական-20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Էսապյանի (Էսապյանի պահածոյի գործարան)	1911 թվական
Բնակելի տուն՝ Կարլ և Վիլհելմ Գիլներների	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Ն. Հովհաննիսյանի	1890-ական թվականներ
Բնակելի տուն՝ Արտեմ Ձալալյանի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն՝ Վ. Մկրտչյանի	1896 թվական
Բնակելի տուն՝ Երվանդ և Իսահակ Տեր-Ավետիքյանների	1905 թվական
Բնակելի տուն՝ Միխայիլ ֆոն դեր Նոննեի	1895 թվական
Մասնաշենք	1898 թվական
Բնակելի տուն (նահանգապետի գրասենյակը)	1905 թվական

հուշարձան	կառուցված
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	19-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն	20-րդ դարի սկիզբ
Վարչական շենք Նահանգապետարանի	20-րդ դարի սկիզբ
Մասնաշենք	20-րդ դարի սկիզբ
Որմնանկարներ	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Ա.Ֆրիկյանների	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ
Փողոցի կառուցապատման հատվածներ. Տեր-Ղուկասովի փողոցը	1870-ական թվականներ-20-րդ դարի սկիզբ
Ակումբի շենք. Քաղաքային ակումբը (Ջանփոլադյանի թատրոն), (սպայի տուն)	1883 թվական
Որմնանկարներ	
Գործարանի շենք. Գիլանյանի լիմոնադի գործարանը	1909-1911 թվականներ
Փողոցի կառուցապատման հատվածներ. Ցարական փողոցը	1860-ական թվականներ-20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Փանոս Սողոմոնյանի	1882 թվական
Բնակելի տուն Ֆադեյ Քալանթարյանի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Զարմայր Անդրեասյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն Խաչատուր Թադևոսյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն Գեղամ Թադևոսյանի	19-րդ դարի վերջ
Բնակելի տուն Ֆադեյ Թադևոսյանի	1910-ական թվականներ
Բանկի շենք. Բանկի Երևանի բաժանմունքը	1902 թվական

հուշարձան	կառուցված
Բնակելի տուն Ազիզյանների	1890-ական թվականներ
Բնակելի տուն Մկրտիչ Տեր-Օհանյանի	1900-ական թվականներ
Բնակելի տուն Մկրտիչ Մկրտչյանցի	20-րդ դարի սկիզբ
Բնակելի տուն Սարգիս Հախնազարյանի	1895-1898 թվականներ
Քանդակ «Լեռնեցիների պարը»	1984 թվական
Քանդակ «Ձրավաճառ պատանին» («Երևանի Սառը Ջուրը»)	1970 թվական
Քանդակ «Վանեցի աղջիկը»	1975 թվական
Քանդակ «Վերածնված Հայաստան»	1985 թվական
Քարայր-կացարան Այգեձոր-1	քարի դար, մ.թ.ա. 20-16-րդ դարեր 14-16 դարեր
Քարայր-կացարան Այգեձոր-2	չորրորդական շրջան, մ.թ.ա. 20-16-րդ դարեր - 14-16 դարեր
Քարայր-կացարան Այգեձոր-3	մ.թ.ա. 20-16-րդ դարեր 14-16 դարեր
Քարայր-կացարան Ծիծեռնակաբերդ-1	մ.թ.ա. 20-16-րդ դարեր - 14-16-րդ դարեր
Քարայր-կացարան Ծիծեռնակաբերդ-2	մ.թ.ա. 20-16-րդ դարեր - 14-16-րդ դարեր
Քարայր-կացարան Ձորագյուղ-1	ուշ միջնադար
Քարայր-կացարան Ձորագյուղ-2	ուշ միջնադար
Քարայր-կացարան Ձորագյուղ-3	16-18-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-1	միջին քարի դար, 15-16-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-2	քարի դար, մ.թ.ա. 30-15-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-3	միջին քարի դար, մ.թ.ա.

հուշարձան	կառուցված
	1-ին հզ, բրոնզի դար, 13-14 դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-4	16-17-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-5	16-17-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-6	14-16-րդ դարեր
Քարայր-կացարան Նորագյուղ-7	14-16-րդ դարեր
Ֆաբրիկայի շենք. Կարի ֆաբրիկան	1930 թվական
Բնակելի տուն՝ Գաբրիել Գաբրիելյանցի	1909-1914 թվականներ
Առանձնատուն («Դերասանի տուն»)	1954 թվական
Հուշարձան Ալ. Սպենդիարյանի	1971 թվական
Մզկիթ Թափաբաշի	1687 թվական
Վիշապաքար	Ք.ա. 3-2-րդ հազարամյակ
Տապանաքար	10-17-րդ դարեր
Տապանաքար	16-17-րդ դարեր

2.2 ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան –20,6 °C, բացարձակ մաքսիմումը հասնում է +41,9 °C:

Տարեկան տեղումների քանակը 354 մմ:

Օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը կազմում է 61%:

Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված է ստորև աղյուսակում «Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ 22-01-2024» տվյալների համաձայն:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութաբ. կայանը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C⁰												Միջին տարե-կան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան «Արաբկիր»	-2.7	-0.2	5.8	11.9	16.6	21.3	24.9	24.7	20.4	13.7	6.6	0.2	11.9	-20.6	41.9

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը

Օդերև-ութաբ. կայանը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական ժ. 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Երևան «Արաբկիր»	77	70	60	57	57	52	50	50	51	60	68	77	61	77	68	50	37

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Ըստ ամիսների												Տարեկան		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան «Արաբկիր»	28	31	38	52	54	27	18	8	13	29	29	27	354	153	201
	25	28	44	34	47	47	34	22	47	34	48	26	48		

Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անդրդրի կրկնելիությունը,%	Միջին ամսական առավելագույն արագությունը,մ/վ	Գերակշռող արագությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագությունների նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող արագությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագությունների առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևել-յան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Արաբկիր»	Հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0.9	ՀվԱրմ	1.7	ՀսԱրլ	1.9
		1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9						
	Ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2.1				
		3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5						
	Հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4				
		6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6						
	Հոկտեմ-բեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8				
		2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0						

2.3 Օդային ավազան

Համաձայն Շրջակա միջավայրի վիճակի մասին 2024թ տեղեկագրի Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: 2024 թվականի ընթացքում փոշու օրական կոնցենտրացիաները գերազանցել են ՍԹԿ-ն 1.1-5.1 անգամ (տարվա ընթացքում 300 օր), ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները՝ 1.1-2.1 անգամ (60 օր), ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները՝ 1.1-1.5 անգամ (11 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (762մկգ/մ³) դիտվել է դեկտեմբերի 9-ին՝ Կենտրոն վարչական շրջանում, ազոտի երկօքսիդի առավելագույն կոնցենտրացիան (84 մկգ/մ³)՝ փետրվարի 8-ին՝ Նոր Նորքում, ծծմբի երկօքսիդի առավելագույն կնցենտրացիան (76մկգ/մ³)՝ փետրվարի 3-ին՝ Արաբկիրում: Գետնամերձ օզոնի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ից չեն դիտվել (Աղյուսակ 5): Նախորդ տարվա համեմատ, օդում փոշու կոնցենտրացիան նվազել է 13%-ով, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ 32%-ով, իսկ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան՝ աճել է 27%-ով:

Աղյուսակ 5. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները 2024թ.

Որոշվող միացություն (դիտակայանի քանակ)	*Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մկգ/մ³ (դիտակայանի համար)*		*ՍԹԿ-ից գերազանցումների քանակ*		*Միջին տարեկան կոնցենտրացիա, մկգ/մ³*	*ՍԹԿ միջին օրական, մկգ/մ³*
			>1 ՍԹԿ	*>5 ՍԹԿ*		
Փոշի (5)	*762*	*Կենտրոն (Լուսավորիչ Ազաթանգեղոս խաչմերուկ)*	*300*	*1*	*126*	*150*
Ծծմբի երկօքսիդ (5)	*76*	*Արաբկիր (Կոմիտաս 29)*	*11*	*4*	*20*	*50*
Ազոտի երկօքսիդ (5)	*84*	*Նոր Նորք (Գայի 32)*	*60*	*0*	*19*	*40*
Գետնամերձ օզոն (5)	*27*	*Արաբկիր (Կոմիտաս 29)*	*0*	*0*	*6*	*30*

Գծապատկեր 19. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու օրական կոնցենտրացիան 2024թ.

Գծապատկեր 20. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.

Գծապատկեր 21. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի օրական կոնցենտրացիան 2024թ.

Գծապատկեր 22. Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի օրական կոնցենտրացիան 2024թ.

Գծապատկեր 23. Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաներ 2023-2024թթ.

Գծապատկեր 24. Երևան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (ֆոն), մգ/մ3
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142

2.4 Ջրային ռեսուրսներ

Համաձայն Շրջակա միջավայրի վիճակի մասին 2024թ տեղեկագրի Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ կենցաղային կեղտաջրերը: Հրազդանի ՋԿՏ 2024 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 21 դիտակետում, որոնցից 14%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 33%-ում՝ 3-րդ դաս, 24%-ում՝ 4-րդ դաս, 29% ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2024 թվականին Քասախ գետի՝ Ապարան քաղաքից վերև և ներքև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս և 5-րդ դասից՝ 4-րդ դաս համապատասխանաբար: Աշտարակ քաղաքից վերև և ներքև դիտակետերում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Գեղարոտ գետի՝ գետաբերանի դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Հրազդան գետի՝ Գեղամավան գյուղի մոտ և Քաղսի գյուղից ներքև դիտակետերում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս: Մարմարիկ գետի՝ Հանքավան գյուղից վերև դիտակետում ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս: Տանձաղբյուր գետի՝ Ծաղկաձոր քաղաքից վերև դիտակետում ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Մնացած դիտակետերում դասային փոփոխություն չեն դիտվել: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը: Ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որից 13-ում՝ նաև որակի մոնիթորինգ: 2023 թվականին այս ՋԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 1126.4մln մ3, որից 43.2%-ը բաժին է ընկնում մակերևութային, 56.6%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է

հիմնականում ձկնաբուծության (47%), ոռոգման (41.6%), արտադրական (4.2%) և խմելու (5.9 %) նպատակներով: 33% 2-րդ (լավ) 3-րդ (միջակ) 4-րդ (անբավարար) 5-րդ (վատ) **Մակերևութային ջրեր** Քանակական մոնիթորինգ Քանակական մոնիթորինգն իրականացվել են 16 դիտակետում, այդ թվում 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: 2024 թվականի ընթացքում գետերում դիտված ջրի միջին տարեկան ելքերը կազմել են բազմամյա միջին արժեքների 70-115%-ը: Հրազդան Հրազդան դիտակետում ջրի միջին տարեկան ելքը կազմել է 7.41 մ3/վ (բազմամյա միջինը՝ 7.77 մ3/վ է), Քասախ-Վարդենիս դիտակետում՝ 0.85 մ3/վ (բազմամյա միջինը՝ 1.21 մ3/վ է), Քասախ Աշտարակ դիտակետում՝ 3.85 մ3/վ (բազմամյա միջինը՝ 3.43 մ3/վ է): 2024 թվականին Հրազդան և Քասախ գետերի ավազաններում դիտված ջրի փաստացի տարեկան միջին ելքերը 2023 թվականի տարեկան միջին ելքերից բարձր են եղել: 2024 թվականին ջրի միջին ամսական ելքերը եղել են հիմնականում նորմաներից ցածր, կամ նորմայի սահմաններում: Առանձին ամիսներին նորմայից բարձր ելքերը պայմանավորված են եղել հոսքի կարգավորմամբ՝ Քասախ-Աշտարակ հիդրոլոգիական դիտակետում, Հրազդան-Հրազդան, Մարմարիկ-Աղավնաձոր դիտակետերում՝ Մարմարիկի ջրամբարից ջրի բացթողնմամբ:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ և Քաղսի գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արգել գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս). Արգել գյուղից ներքև հատվածում՝ պայմանավորված արսենով և բարիումով, Արզնի ՀԷԿ-ից վերև՝ արսենով: Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ ամոնիում իոնով, Գեղանիստ գյուղի մոտ հատվածում՝ նիտրիտ իոնով: Երևանյան լճի մուտքի մոտ հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և ընդհանուր ֆոսֆորով: Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

Գծապատկեր 94. Քասախ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2023-2024 թթ.

Գծապատկեր 95. Քասախ գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2023-2024թթ.

Գծապատկեր 96. Հրազդան գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը 2023-2024թթ.

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքիերի տեղադրման համար կատարվելու է մոտ 14250 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր հանվող ամբողջ զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից սահմանված վայր, հետագայում հետլիցքքի չափով գրունտը նորից կբերվի:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

2.7 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երեւանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային եւ անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա եւ ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային եւ հալոֆիլ-անապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (Artemisia fragrans), որը մինչեւ 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն գարնանը եւ ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ եւ ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ Ceratocephalus falcatus, Ziziphora tenufor, Zizifhora persica, Alyssium desertorium, Poa bulbosa, Bromus tectorium, Lepidium vesicarium տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման եւ օդի ջերմաստիճանի բարձրացման հետ այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (Artemisia), Kochia prostata, Noaea mucronata եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ Acorus calamus L. (Խնկեղեգճահճային), Lepidium lyratum L. (Նվարդակքնարաձեւ), Salsola tamamschjanae Iljin (Օշան Թամամշյանի), Astragalus paradoxus Bunge (Գազտար օրինակ), Glycyrrhiza echinata L. (Մատուտակ խոզանավոր), Rhizocephalus orientalis Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեալներ չունեն:

Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին եւ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ Nyctalus noctula (շեկիրիկնաչղջիկը), Vespertilio ognevi (Օգնեւիմաշկեղը), միջատակերներ (Hemiechinus auritus, Mustela nivalis): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ Phytodrymadusa armeniaca (ծղրիդներ), Nocarodes armenus (մորեխներ), Amphicoma eichleri, Cantharis araxicola (բզեզներ), Zodarion petrobium (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն Buttus caucasicus-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին տենսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել Rhinolophus Mehelyi (Մեհելիիպայտաքիթ), (Barbastella leucomelas,) Ասիական լայնականջ չղջիկ, (Miniopterus schreibersi) Սովորական երկարաթեւ չղջիկ: Թռչուններից՝ (Circaetus galicus galicus) Եվրոպական օձակերը, (Merops superciliosus persicus) Պարսկական կանաչ մեղվակերը, (Sylvia nisoria nisoria) Եվրոպական ճուռական մանշահրիկը, (Luscinia svecica occidentalis), Իրանական կապտափողը, (Remiz pendulinus menzbieri) Իրանական սովորական ճոճհավը եւ այլն, սողուններից՝(Eumeces schnederi) Երկարաթեւ սցնիկը, (Mabuya aurata) Ոսկեգույն մաբույա, (Elaphe hohonaekeri) Անդրկվկասյան սահնօձ:

2.8 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝

1. Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 43,8 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և մոտ 6200 խմ շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայեցված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի նուբարաշենի խճուղի 4 հասցեում գտնվող տարածք:
2. Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 14250 խմ ծավալով, կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված վայր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող գրունտային հողերը և շինարարական աղբը կտեղափոխվի Էրեբունի վարչական շրջանի Նուբարաշեն խճուղի հ.4 հասցե:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- Տարածքում առկա հիմքերի քանդման և շինարարական աշխատանքների փորման բեռնման աշխատանքների ընթացքում փոշու արտանետումներ;

- հողային զանգվածների տեղափոխման ժամանակ փոշու արտանետումներ;

- շինարարական տեխնիկայի շահագործումից արտանետվող ծխագազեր;

- Զոդման աշխատանքերից ազոտի և ածխածնի օքսիդի աէրոզոլների և այլ արտանետումներ,

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում: Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ առկա շինությունների քանդման և հողային աշխատանքների ընթացքում:

- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx, SO2):

- Զոդման աշխատանքերից ազոտի և ածխածնի օքսիդի աէրոզոլների և այլ արտանետումներ,

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով;
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով;
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,

- հողման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:

<u>քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» նորմով նախատեսվող միջոցառումներ</u>

- Շինարարության փուլում փոշեառաջացումը ճնշելու նպատակով նախատեսվում է տեղադրել 8 հատ ջրային մառախուղի սարքավորումներ:
- Փոշեորսիչ և փոշեճնշիչ սարքավորումների (Dust Collectors) Հղկման ժամանակ առաջացող մանրադիսպերս փոշի (բետոնային, ցեմենտային, գիպսային, փայտի): Արտանետումների արդյունավետ կառավարման համար կիրառվում է տեղային փոշեկլանմամբ հղկող սարքավորումներ, որոնք հագեցած են փոշեկլանիչ կափարիչով, որը փակում է հղկման գոտին և կանխում է փոշու տարածումը շրջակա միջավայրում, հղկող մեքենան միացվում է փոշեկլանիչին: Սարքի աշխատանքի ժամանակ ջրօգատործում չկա:
- շինարարական հրապարակի ժամանակավոր ճանապարհները ծածկվում են բետոնով, իսկ մնացած տարածքները՝ խճի շերտով՝ փոշու առաջացումը բացառելու համար:
- Աշխատանքային գոտում փոշու արտանետումները կանխելու և նվազագույնի հասցնելու համար՝ պետք է կիրառվեն փոշեճնշիչ մեթոդներ և փոշենստեցման միջոցառումներ՝ ելնելով բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվներից, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի № 160-Ն որոշման Հավելված N 1-ով:

- Փոշեճնշման և փոշենստեցման միջոցառումների նկատմամբ հետևողական և պատշաճ վերահսկում ապահովելու համար՝ այդ աշխատանքների

արդյունքները կապալառուի կողմից պետք է լրացվեն շինարարության վարման մատյանի «Փոշենստեցման և փոշեճնշման միջոցառումների գրանցում» բաժնում՝ վավերացվեն պատասխանատու մասնագետների ստորագրությամբ։

Փոշենստեցման և կառավարման միջոցառումները ներառում են.

1) շինարարական հրապարակի խնամքը՝ կանոնավոր մաքրումը և պատշաճ կահավորումը,

2) փոշեպաշտպան պատնեշների և ցանցերի օգտագործումը շինարարական հրապարակի սահմանագծով՝ փոշու տարածումը շինարարական հրապարակից դուրս սահմանափակելու համար, ինչպես նաև՝ կառուցվող շենքերի թաղանթապատումը և ցանցապատումը (փոշու առաջացման օջախներում), ներքին տարածությունների մեկուսացումը շրջապատից՝ փոշու տարածումը մթնոլորտ կանխելու, այն աշխատանքային առանձին հատվածներում տեղային չեզոքացնելու համար,

3) նյութերի կառավարումը՝ապահովում է փոշի առաջացնող նյութերի (ցեմենտ, ավազ, գաջ, խիճ և այլն) տեղափոխումը և պահպանումը հատուկ մեթոդներով՝ բացառելու համար նրանցից փոշու առաջացումը,

4) օդի որակի մոնիտորինգը՝ որի իրականացման համար շինարարական հրապարակները պետք է հագեցվեն անհրաժեշտ սարքավորումներով՝ մթնոլորտային օդում փոշու մակարդակը մշտադիտարկելու և վերահսկելու համար։

5) Հարակից տարածքներում զգայուն օբյեկտներ չկան։

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ (քամի անհողմություն,անոմալ բարձր շոգ կամ ցուրտ եղանակ, թանձր մառախուխ, ամպրոպ) իհայտ գալու դեպքում՝ ըստ իրավիճակի, կիրառվում են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի քանակի և հաճախականության ավելացում,
- աշխատանքի տևողության կրճատում,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալների նվազեցում,

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

  Շինհրապարակից ելքի ժամանակ տեխնիկական միջոցների Karcher-ի միջոցով անվադողերի լվացումից առաջացած հոսքաջրերը և անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանները գտնվում են շինարարական հրապարակին կից, ցածրադիր հատվածներում իրենցից ներկայացնում են պլաստմասե 2 հատ 100 խմ ծավալով տարողություններ, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 3500 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,

3.3.4 ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 1055,1 քմ:

- Կանաչապատման համար նախատեսվող տարածքում անհրաժեշտ է իրականացնել հողային աշխատանքներ: Ողջ տարածքում անցկացվելու է ցնցուցային ոռոգման համակարգ, քանի որ սիզամարգային տարածքը գերակշռում է: Բուսատեսակները ընտրվել են հաշվի առնելով Երևան քաղաքի տվյալ տարածքի էկոլոգիական վիճակը, տեղադիրքը, քամիների ուժգնությունը և այլն:
- Տարածքում համաձայն նախնական սխեմայի նախատեսվում է տնկել՝ ուսումնասիրելով տեղանքի բնակլիմայական պայմանները, կանաչապատման համար ընտրվել են հետևյալ բուսատեսակները՝ Ծորենի թունբերգի պ.ձ. ատրոպուրպուրեա, Հուդայածառ կանադական, Դրախտավարդ հուրանավոր, Գիհի հորիզոնական պ.ձ. ոսկեեզր, Գիհի ժայռային պ.ձ. սքայռոքեթ, Վարդ պ.ձ. շտամբի վրա, Վարդ գաճաճ: Վերջնական տեսակայաին կազմը կհստակեցվի Երևան համայնքի հետ կանաչապատման նախագիծը համաձայնեցնելուց հետո:
- Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք 633.06 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 1460 օր, տարածքի ոռոջման նպատակով Երևան ՋՕԸ հետ համապատասխան պայմանագիր կկնքվի մոտ 4 տարի հետո:
- Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման համապատասխան:

3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ

այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բազմաֆունկցիոնալ հասարակական շենքի շենքում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;
- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

